Ը. ՏԱՐԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 8 ՅՈՒՆԻՍ 1905 ԹԻՎ 720

ՇԱՐԺՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Մանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

—o—

Վարձայի համար ձեռքի 10 սանթիմ

Խմբագրական եւ գրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ (Bu garie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂՈՒ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅԵՐԻՆ

(Բագուի, Նախիջեւանի կոտորածներէ եւ Տաճկահայկական սարսափներէ առթիւ)

Տառապեալ ժողովուրդ, անբախտ աշխարհ, դարաւոր սպանդանոց, ե՞րբ պիտի վերջանան հառաչանքներդ, հոնգիւններդ, քանիսո՞ն, խեղճ ժողովուրդ, անմեղ արիւնովդ պիտի ներկուին հայրենիքիդ քարերն ու ժայռերը։ սեւաւոր աշխարհ չը կշտացա՞ր արդեօք, հրեշային ստամոքսիդ ո՞ր անկիւնը մնաց որ արիւնով չը ներկուեցաւ։

Մահ, կոտորած, արիւն, արտասունք, բռնաբարութիւն, թալան, կողոպուտ, բառեր անսիրտ, թունաւոր, սարսեցուցիչ, բառեր դարերի նողկանքի, մարդկային ատելութեան արժանացած, որքան ծանօթ, որքան ընտանի էք հնչում մեր ականջներին. դուք մեր օրօրներն էք եղել մանկութեան օրրանից, մեր յոյզերի և մըրմունջների աղբիւրը պատանեկական և երիտասարդական հասակում. կը լինէք մեր վերջին շնչի տխուր հառաչանքները։

Էլ չեն սարսափում, չեն սարսըռում մեր մարմինները, չեն ըմբոստանում մեր հոգիները, չեն կարմրում մեր այտերը, սրտամորմոք բօթեր լսելիս։ Մեռել են ամէն զգացմունք, մեռել է մեր հոգին. մենք մի դիակ ենք արգահատանաց և անարգանաց արժանի։ Անպէտք և անօգուտ կեանք անզգայ և քարսիրտ, անկարեկից և անհեռատես ուղղ՝ ահա ինչ են թողել մեզ դարերի պատմութիւնը. ինչ է արել մեզ մեր միջավայրն ու շրջապատը։

Խոզային անտարբերութեամբ ճահճի մէջ պառկած ուրախանում, խնդում ենք մեր վայելած հանգստութեամբ. մինչեւ ռումբի պէս չէ պայթում գլխներիս ահեղ ժամը. մինչեւ չէ թափւում մեր արիւնը, չեն բռնաբարում մեր սրբութիւնը։

Պատահելուց յետ միայն ափսոսալ. ահա մեր հոգեբանութիւնը։ Դարերի խախուտ անկայնութիւնը չը սորվեցրեց մեզ նպատակայարմար միջոցներ ձեռք առնել, վերջնականօրէն չը սովորեցրեց մեզ, որ պէտք են, կարեւոր են ծայրահեղ միջոցներ։

Մենք վաղուց է որ սովորել ենք ուրիշի գերեզմանի վրայ առանց արտասունքի լաց լինելը, թէկուզ այդ ուրիշը լինի մեր արիւնակից։ Սովորել ենք անփոյթ լինել քանի մեր անձնականը չեն վիրաւորում, քանի մեր սրտերը չեն խոցում։ Գալիս է վերջին րոպէն, ահեղ ժամը. կարմիր սուրը բարձրանում է. երեւում են կարկամած դէմքեր, որոնց վրայ նկարուած է ափսոսանք անցեալ սխալների համար, պատրաստակամութիւն ծայրահեղ զոհողութեան։

«Հայի յետին խելքն է գովելիս»։ Բայց ինչպէ՞ս առաջ բերել այդ «վերջին» խելքը... երբ։ աւաղ, խելքի գալուց յետ նիւթական միջոցներն են պակասում։

Գլխակոր կանգնած է հայը իր տան աւերակների մոխրակոյտի առաջ և խորհում է. դառն դառն են նորա խոհերը։ Նա զգում է որ այդ մոխրակոյտը կարող էր հզօր ամբարտակ դառնալ՝ կասեցնող վայրենի կրքերի։ Նա զգում է այդ և աւաղում, «աւաղ փառացս անցաւորի, աւա՞ղ ձեռնթող միջոցներիս...

Լալկանների, բուերի մի երամակ ենք։

Լալ, ողբալ, որքան լաւ գիտենք մենք, կոկորդիլոսեան արցունքներով... հիւծել մասմաս, քամել կաթ կաթ, մեռնել կամաց կամաց, մաքառել խումբ-խումբ, կռւել թեթեւ։ օգնել աննշան. ահա մեր դեւիզը...

Ե՞րբ պէտք է վերջանայ այս բոլորը։

Ցաճկահայաստան և Կովկաս, էլ մի բան մնա՞ց ձեզ. դեռ չէ լցուել համբերութեան բաժակը, դեռ չէ քամել տանջանաց մըրուրը։ Էլի՞ ես սպասում, քի՞չ էր այս բոլորը։ Մի փախենար կը հասնի սարսափներից վեհագոյնը, և արժանի ես։

Նոյաձեւութիւններ, միմոսութիւններ, որքա՞ն չուտ ես ընդօրինակում որքան արագաքայլ ես ընթանում դէպ ղեխութիւն. ինչքա՞ն ընտանի են քեզ համբերութեան օրհներգները, բայց մերժում ես ըմբոստացման երգը։ վեհ և սրբազան. ոտար է քեզ ըմբոստացման վեհ գաղափարը՝ հացիկ ասելի կարեւոր։

Կոտորուիր, արժանի ես, կոտորուիր։

Ցնորամիտ երեխայի նման արդարութեան, կարեկցութեան ես սպասում, բայց որտե՞ղ կայ արդարութիւն. միթէ՞ այնտեղ ուր հոսում է ռուս—ճաբոնական արիւնը. կամ գուցէ Վիլհէլմեի անմարդասէր հայրենիքում։

Այո՛ քեզ. երբ այլեւս աշխարհի երեսին հետքդ անգամ չի մնալ, կօգնեն ողբերով երեմիականներով. թղթի մէջ ծրարուած կոկորդիլոսեան արտասունքներով։

Դու քեզ ե՞րբ օգնեցիր, որ ուրիշներն էլ օգնեն քեզ. ե՞րբ խլեցիր, ոչ թէ բերնիդ պատառը, այլ փշրանքիդ աւելորդ ծանրութիւնը եւ մեկնեցիր այն որբերին, որոնք հայրենիքի նա հատակներն են, քո սրտիդ զգայուն լարերն են...

Ի՞նչպէս մեծարեցիր քո պահապան հրեշտակներիդ, քո իրաւանց վեհ ախոյեաններին, քո հարազատ սրտցաւ զաւակներին։

Մոռանում ես նոցա, մոռանում անարդ, ապիկար, ստոր հոգով։ Ո՞ւր են, ոչ թէ հսկայ կոթողները և անսասան յուշարձանները, այլ գաղափարի երկրպագուներդ։ Ո՞ւր են նոյն շաւղով ընթացող, նոյն իդէալներին երկրպագող համախումբ զաւակներդ։ Սակաւաթիւ են նոքա, շատ սակաւաթիւ։

Դարերի հարւածները զարթնացրին ընդհանուր ինքնագիտակցութիւն։ Երկրպագի՛ր արթնցած ինքնագիտակցութեան։ Երգի՛ր ըմբոստացման երգը, թէ չէ հեռու չէ այն կարմիր օրն, երբ պիտի երգես «կարապի երգդ»։

Եան—Հուս

24 Մայիս 1905

Ղազին (Պարսկաստան)

ՀԱՅԵՐԸ ԻՆՉ Դ ՐՔ ՊԷՏՔ Է ԲՌՆԵՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Վերջերս ռուս կառավարութեան թոյլտուութեան հաճաձայն հայերն էլ իրենց վիճակը բարեփոխելու համար գրաւոր պահանջներ են ներկայացրել։ «Դրօշակի մէջ արդէն տպած են այդ պահանջները մանրամասնօրէն։ Ռուս կառավարութեան յաջողել է Կովկասում ապրող երեք ցեղերին էլ—հայ, թուրք, վրացի, խաբել և պաշտօնապէս նրանց դնել այլազան ձգտումներ ունեցող ցեղերի հողի վրա։

Այդ ինչ սակար ու մթին ռուս կառավարութեան հաճելի քայլը հրաւիրել է ուշադրութիւնը մեր յեղափոխական երկու օրգանների՝ «Դրօշակի և «Հնչակի ոռոնք և գատապարտում են կառավարութեան պատրաստած թակարթի մէջ ընկնելը և չեշտում որ կովկասեան ցեղերի համերաշխութիւնը երեւան պէտք է կար հենց այդ պահանջների խնդրում. այսինքն երեք ցեղերը ոչ թէ զատ զատ այլ միասին պէտք է կազմէին այդ պահանջագիրը և ներկայացնէին կառավարութեան։

Ու իրօք շատ արդարացի է մեր յեղափոխականների նկատողութիւնը։

Նախ և առաջ պէտք է ընդունել որ ռուս կառավարութիւնը անկեղծօրէն ոչ մի տրամադրութիւն չունի իր ռէժիմի ձեւը փոփոխութեան երթարկել և թոյլ տալ որ ժողովուրդը իրօք յանդգնի իր ձեռքով ծրագիրներ մշակել իր կացութիւնը բարեփոխելու։

Միապետական ռէժիմը խայ

առակված պատաքին թշնամու կործանարար հարուածներից, մի կերպ ուզում է խաբխբել, ընդհանուր ըմբոստութեան սեմին հասած հպատակների շրթունքներին մնդր քսելով մինչեւ որ պատերազմը մի կերպ վերջանայ և իր ձեռք ու ոտքը ազատ լինեն յանդգնացած հպատակներին «ալա Ռօմանով» սանձահարելու։ Դրա ապացոյց կարող է լինել այն, որ ռուս կառավարութիւնը շատ լրջօրէն է վարվում նոյն իսկ բուն ռուս ժողովուրդի պահանջների հետ, որոնք ներկայացվել են ուզում Ցարին ժողովրդային զանազան կարգի և աստիճանի պատգամաւորների միջոցով։ Եթէ բուն ռուս ժողովուրդի հետ այդպէս է վարվում, մի տեսակ փորձելով թէ ռուսական ժողովրդական խաւերը ինչ աստիճան սերտ փարած են իրենց նոր ծրագիրներին և այդ ծրագիրների մերժման պարագայում որչափ լուրջ և համերաշխ դիմադրութեան տրամադիր, հապա որչա՞փ կեղծաւորաբար ու խաբեբայօրէն պէտք է տրամադրված լինի դէպի Կովկասի ժողովուրդը։ Այդ ոչ անկեղծ տրամադրութեան ապացոյցներից մէջի զարկողը այն է որ կառավարութիւնը ինքը Կովկասեան ցեղերին առաջարկել է զատ զատ ներկայացնել իրենց պահանջները, որպէսզի հէնց առաջին քայլում խոր անդունդ բանայ Կովկասեան ցեղերի մէջ վըտանգաւոր համերաշխութեան ուրւականը միանգամ ընդմիշտ ոչնչացնելու նպատակով։

Նոյն այդ բաժանումը ռուս կառավարութիւնը ճգնում է առաջ բերել և բուն ռուս ժողովրդի մէջ։ Նա մտադրութիւններ ունէր, դեռ ունի էլ փոխանակ ազգի ընդհանուր ներկայացուցիչներից ընդհանուր ազգային ժողով կազմելու, կազմել դասակարգային ժողովներ։ Այդպէս ուզում է որովհետեւ ամէն մի դասակարգ իր միակ շահերից մըղվելով և ենթարկվելով իր դասակարգային հեռաւոր բարիքների ցնորքներին այլազան պահանջներ պէտք է դնէր կառավարութեան առջեւ, որով կառավարութիւնը պէտք է ունենար իր ձեռքում զանազան դասակարգային՝ իրար հակառակ ու միասող բարենորոգումների պահանջների մի քաոս ու գրանով պէտք է կարողանայ ջախջախել համերաշխութիւնը ռուս զանազան տարրերի մէջ և ընդհակառակը ստեղծել այնպիսի մի դրութիւն որ ժողովուրդի զանազան խաւերը փոխանակ միացած կառավարութեան դէմ կռիւ մըղելու, սկսեն իրար դէմ կռիւ մղել, ու կառավարութիւնը ամենն հակառակ տարրի հանդէպ ներկայանար հաշտաբար բարերարի դերում և տարիներով զրաղեցներ ժողովրդին նրանց հեռացնելով երկիրը իրօք բարենորոգելու, այսինքն միապետական ռէժիմը տապալելու հիմնական ծրագրից։

Ըստ երեւոյթին ռուս կառավարութիւնը չը կարողացաւ և չը պէտք է կարողանայ էլ անտագօնիզմ ստեղծել ռուս զանազան տարրերի մէջ։ Այսօր Զեմստվո, ազնուականութիւն, ուսանողութիւն, յեղափոխական զանազան տարրեր գրեթէ միևնոյն պահանջներն են դնում Ցարի առջեւ —սահմանադրութիւն, իր ունեցած բոլոր առաւելութիւններով միասին։ Բայց Կովկասում յայտնվել է, երեք ցեղերը զանազան պահանջներ են դրել։ Սակայն միթէ կարելի չէ դրա առջեւը առնել։ Կարծում ենք որ կարելի կը լինի, բաւական է որ Կովկասեան երեք ցեղերի պահանջկոտ ներկայացուցիչները անդրադառնան իրենց գործած մեծ սխալի վրա ու շտապեն մի նոր համակովկասեան ժողով գումարել և իրենց ցեղային եսասիրութիւնը զոհելով համաձայնութեան յանգեն ու ընդհանուր պահանջներ ներկայացնեն, որով և միանգամից կը կտրեն կառավարութեան Կովկասեան ցեղերին իրարից զատելու և թշնամական յարաբերութիւնների մէջ դնելու յոյսը գոնէ մի որոշ ժամանակի համար։

ՎԱՐԴՕ

ԱԶՈՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Թղթակցութիւն Կովկասից)

—○○—

ԹԻՖԼԻՍ, 23 ապրիլի

Այս նամակով ուզում ենք խօսել քաղաքական կուսակցութիւններից մէկի մասին, որին երեւի վիճակված է մօտիկ ապագայում կարեւոր դեր կատարել եւ առանց արիւն թափելու՝ տէր դառնալ իրերի վիճակին։ Դա այսպէս կոչված՝ ռուս զէմէցների կամ միբերալների կուսակցութիւնն է։ որ կապված է արտասահմանում Սըտրուվէի խմբագրութեամբ հրատարակւող «Սվոբոժդենիէ» (Ազատագրութիւն) լրագրի հետ և որ յայտնի է «Ազատագրութեան Միութիւն» անունով։ Իրեն նպատակ դնելով ռամկավարական սահմանադրութիւն Ռուսաստանում՝ այդ կուսակցութիւնը ձգտում է իր նպատակին հասնել՝ ոչ թէ յեղափոխական ճանապարհներով, այլ կառավարութեան ներկայ ֆունկցիաները անգործութեան դատապարտելով՝ զանազան կոչումների և շրջանների ինտելիգենտ տարրերի միութիւններ կազմել եւ դրանց գործադուլներով չեզոքացնել կառավարական կարգադրութիւններն ու հիմնարկութիւնները, ինչպէս այդ արեցին բարձրագոյն դպրոցների պրոֆէսորները՝ որոշելով չվերսկսել պարապմունքները, եթէ սեպտեմբերին պետական կարգերը նոյնը կը լինին, ինչ որ այժմ։ Պիրոգովեան բժշկական համագումարին կայացրած որոշումը՝ չմասնակցել կառավարչական ոչ մի սանիտարական մասնախմբի՝ խօլերայի դէմ կուելու համար, քանի որ այդ մասնախմբերը կրում են կառավարական եւ ոչ հասարակական բնաւորութիւն. նոյնանման միութիւններ և որոշումներ առաջ բերել ինտելիգենտ աշխատանքի այլ շրջաններում եւս ու այդպիսով ստիպել կառավարութեանը համաձայնելու և զիջումների անելու,—ահա նրա ծրագրած միջոցները։

Իր այդ նպատակին յաջող և շուտով հասնելու համար՝ կուսակցութիւնը լաւ գիտակցում է, որ հարկաւոր է նաեւ ուրիշ տարրերի գործակցութիւնը եւ այդ պատճառով աշխատում է իր ծրագրի մէջ նախատեսել դրանց պահանջներն եւ բաւարարութիւն տալ։ Մի կողմից նա բանւորներին ութժամեայ բանւորական օր է խոստանում եւ միւս կողմից միապետութեան ոչնչացման մասին խօսք չի ուզում անել եւ ընդունում է նրա գոյութիւնը՝ սահմանափակված իրաւունքներով։ Մի կողմից միապետութեան միածոյլ ամբողջութիւն է ուզում պահպանել եւ միւս կողմից ճնշված ազգերին լեզուի եւ նախնական ազգային կրթութեան ազատութիւն է խոստանում, որ ամփոփում է «տեղական լայն ինքնավարութիւն և կուլտուրական ինքնորոշման իրաւունք» բանաձեւում։ Պարզ երեւում է ձգտումն՝ այս կամ այն կերպ գոհացնել դժգոհ տարրերին եւ միացնելով՝ տանել դէպի կռիւ միապետութեան դէմ։ Այս ծրագիրը չգոհացնելով բոլոր դժգոհ տարրերին, գոհացնում է Ռուսաստանի բուրժուազիային եւ մասամբ էլ թագաւորական տանը, որը ամբողջապէս իր իրաւունքներից չզրկուելու համար գոհ կը լինի.

Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

—⁘—

ՎԻԿՏՈՐԻԱ ՊՈՎԼՈՎՆԱ

— ⁘ —

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագիտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական suroriնակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

36

Է.

(Շար. նախորդ թիւին)

—Անուշկան ոչ ուտում եւ ոչ խըմում է, ու մի ճար մտածում դռնապանի ճանկերից ազատվելու։ Մինչդեռ վերջինը հետզհետէ աւելի է աներեսանում։ Մի օր էլ գինետան մէջ իր բարեկամների հետ հարբում է և պարծենում —կուզէ՞ք բարեկամներ, ու ընկերներ, գիտենալ թէ ես ինչ աղջկայ հետ եմ ապրում. Դիմովի աղջկայ հետ։—ստում ես պատասխանում են ընկերները. Նա բարկանում է եւ չը վարկաբեկվելու համար գինետան տղային հրամայում է.

—Դնա Դիմովա Աննա Իվանովնայի մօտ եւ ասա նրան որ անպատճառ, այս վայրկեանիս մեզ մօտ գայ. ասա որ Մաքսիմը, տարփածուդ պահանջում է որ գաս։ Անպատճառ գայ, թէ չէ վատ կը լինի...

Տղան վազում է, իսկ ընկերութիւնը ծաղրում է Մաքսիմին.—այ գինով, հաստ ստախօս հա. տիրոջ աղջիկը մի՞թէ կարող է սրա հետ ապրել. նա քեզ վրա ակնարկ նետելուց անգամ կամաչի։ Բայց մի ժամ էլ չէ անցնում եւ ամենքի բերանը բաց է մնում. Ներս է մտնում Աննա Դիմովնան։

Ի՞նչ էք ուզում Մաքսիմ Եֆիմովիչ։

—Այ ընկերներս չեն հաւատում որ դու իմ սիրուհին ես ուրեմն անուշիկս դու համբուրիր ինձ եւ սրրանց էլ օղիով հիւրասիրիր։

Աննուշկան բոլորովին չէ հակառակում, միայն ասում է.

—Մաքսիմ, դու Աստծուց չես վախենում. իմ արցունքներիս չափը կանցնեն. եւ նստում է գինետան մէջ ու ամենքի հետ հաւասարապէս քէֆ անում եւ ինքը չէ հարբում։

Գինետան մէջ գանվողներին ամէնքին գինեպանի հետ միասին հարբեցնելուց յետոյ. տղային հրամայում է խոտ բերել որ լաւ պարկեն։ Աննուշկան հարցնում է-Մաքսիմի հետ խմողները բոլորն էլ այստեղ է՞ն.—ամէնքն էլ, պատասխանում է տղան —Ամէնքն էլ հարբա՞ծ են։ —Ամէնքն էլ։ —Ամէնքն էլ լաւ քնա՞ծ են։ ամէնքն էլ։ Է դու էլ քնացիր. այս խօսքերի հետ դանակով իսկոյն տղայի կոկորդը կտրում է ու տղան իսկոյն մեռնում է։ Դրանից յետոյ Աննան խոտերը վառում է. գինետունը գոյում եւ շտապում տուն։

Բոլոր գինովները եւ չարագործ Մաքսիմն էլ միասին այրվում են։ Վկաներ էլ չեն մնացել։ Միայն թէ Անուշկան խենթենալու պէս է լինում եւ երբ այդ խնդրի մասին հարցաքննութիւններ է սկսվում. անձամբ գնում եւ դատարանին ամէն ինչ յայտնում է։

Նրան գատապարտում են մտրակելու եւ ցկեանս տաժանակիր աշխատութեան եւ այդ որոշումը ուղարկում են Պետերբուրգ Եկատերինա կայսրուհուն, հաստատելու համար։ Եկատերինան կարդալով այդ դատը սարսափում է եւ յայտարարում.

—Ուզում եմ այդ սարսափելի ոճրագործուհուն տեսնել։ պալատականները ասում են.

—Ձերդ մեծութիւն, ոչ մի կերպ կարելի չէ. Նեարդերդ կը խանգարվեն։

—Նեարդերիս դէմ ես ունեմ Բոտկինի կաթիլները, պատասխանում է կայսրուհին, իսկ դուք բարեհաճեցէք իմ կամքը կատարել։

Վերջապէս Աննուշկային ներկայացնում են կայսրուհուն. կայսրուհին առանձին տեսակցութիւն է ունենում եւ ասում է.

—Աննա Դիմովա, դու կին ես, ես էլ կին եմ. բոլոր կիներս քոյրեր ենք. պէտք է որ իրար ըմբռնենք։ Պատմիր թէ գործը ինչպէս եղաւ...

Աննուշկան պատմում է իր ամբողջ դժբախտութիւնը, կայսրուհին լսելով՝ սարսափում է եւ ասում.

—Ինչպէս հնարաւոր է որ դու մեղաւոր չես։ Դու ինչպէս ես ուզում ներում խնդրել։ Դու ինչպէս ես ուզում ներում խնդրել։

—Ներում խնդրել, ինչպէս թագուհի՞ս։ Ես ինչպէս ներում խնդրեմ։ Ես ինչպէս ներում խնդրեմ։

—Դու ինչպէս ես ուզում ներում խնդրել։ Դու ինչպէս ես ուզում ներում խնդրել։

—Ներում խնդրել, ինչպէս թագուհի՞ս։ Ես ինչպէս ներում խնդրեմ։ Ես ինչպէս ներում խնդրեմ։

ի հարկէ, մեծ զանի վրայ. թէկուզ սահմանափակած իրաւունքներով։ Եւ ահա մենք տեսնում ենք այդ կուսակցութիւնը կիսալեգալ դրութեան մէջ՝ այն աստիճան, որ նրա ծրագիրը նորերս հրատարակեց Պետերբուրգի «Նովոստի» լրագրում։

Թէ ինչ դիրք կարող են բռնել դէպի այդ կուսակցութիւնը Ռուսաստանում ներկայումս գոյութիւն ունեցող յեղափոխական եւ սոցիալիստական կուսակցութիւնները եւ խմբերը, դա շատ լաւ արտայայտեց այն ժողովում, որ կայացաւ Թիֆլիսում, երէկ, ապրիլի 22-ին։ Մի խումբ ինտելիգենտների Նախաձեռնութեամբ գումարուած այդ ժողովում «ազատագրութեան միութեան» կուսակցութեան մի յայտնի ներկայացուցիչ ծանօթացրեց իրենց հիմնական սկզբունքների հետ եւ առաջարկեց Թիֆլիսում եւս կազմել դրա մի ճիւղը. մի բիւրո, որը կապ պահպանելով միւս տեղերի հետ՝ սկսի նոյն ուղղութեամբ գործել։ Կարդացուեց կուսակցութեան ծրագիրը։ Մի շարք համակրական ճառերից յետոյ սկսեցին հետզհետէ քննադատութիւններ առաջ գալ որոնք վերջում հասան շատ որոշ արտայայտութիւնների, ամբողջապէս դիմադրական ոգով 1)։

Ծրագրի մէջ որոշակի նկատւում էր յեղափոխական ոգու եւ ճնշուած ազգերի ազատ զարգացման նրաշխաւորութեան բացակայութիւնը։ Եւ քննադատութիւնները էլ դրանց շուրջն էին պտտում։ Խօսեցին գլխաւորապէս վրաց երկու կուսակցութիւնների ներկայացուցիչներ՝ Սոցիալ-դեմոկրատների եւ Ինքնավարականների։ ապա մի քանի հոգի էլ Հ. Յ. Դաշնակցութեան անունից։ Սոցիալ դեմոկրատները կանգնած իրենց այն տեսակէտի վրայ, որ ամեն մի ինքնավարական պահանջ բուրժուական է եւ բաժանում է պրոլետարիատին ու նրա զանազան մասերի սերտ միութիւնը դժուարացնում, դիմադրում էին մի կողմից «Սվոբոժդենիէ»ի ծրագրին, իսկ միւս կողմից՝ իրենց ինտելիգենցիայի մի մասի ինքնավարական ձգտումներին։ Վերջինների դէմ առանձնապէս բերում էին պատճառաբանութիւններ այն մտքով, որ վրացի ինքնավարականները իրենց քաղաքի մէջ գցել են օրինակ եւ Թիֆլիսը, որը պատմական իրաւունքով վրացիներինն է, իսկ իրապէս բնակուած է մեծ մասամբ հայերով, որոնք եւ ինչնավար Վրաստանում մի իրաւազուրկ ժողովուրդ պիտի դառնան։ Սր իբր թէ հայերի համար գա՛ ոչ ցանկալի պահանջ կը լինի, քանի որ հայերը միապաղաղ ազգաբնակութիւն չլինելով եւ որոշ տէրրիտորիա չունենալով, չեն կարող նոյնպէս ինքնավարութեան հարց դնել։ «Ինքնավարականները» պնդում էին, որ վրացիների եւ հայերի հաշիւները զուտ ներքին, ընտանեկան են եւ որ երկու ժողովուրդները իրար հետ կարող են կարգադրել այդ հաշիւները, իսկ ընդհանուր թշնամու դէմ կարող են միանալ։

Դաշնակցական երեք ճառախօսներ, մինը մէսին լրացնելով, պարզեցին, որ «Սվոբոժդենիէ»ի ծրագիրը, թէեւ արտայայտում է ռուս ինտելիգենցիայի բարի ցանկութիւնները մանր ազգութիւնների վերաբերմամբ, բայց այդ ցանկութիւնները միայն թղթի վրայ են եւ իրականութեան մէջ ոչ մի ապահովութիւն չեն ներկայացնում։ Ամենաազատ սահմանադրութիւն ունեցող երկրներում անգամ, փոքրիկ հպատակ ժողովուրդները ազատ չեն ճնշումներից եթէ նրանք օրէնսդրական իրաւունքով ապահովուած ու իրենց երկրի սահմաններում ազատ ու ինքնավար չեն։ Օրինակներ բերեցին Անգլիայից, Գերմանիայից, Աւստրիայից։ Կարելի՞ է ասել թէ «հայերը միապաղաղ ժողովուրդ չեն եւ տէրրիտորիա չունեն»... Դա միայն ուսաց կառավարութեան քմահաճոյ ադմինիստրատիւ բաժանման շնորհիւ է, որ ոչ մի նահանգում հայերը մեծամասնութիւն չեն կազմում։ Եթէ չկաղկանգնենք կովկասեան արդի նահանգային բաժանումներով, այլ դրանից անկախ նայենք քարտէզին, կը տեսնենք, որ մի խոշոր տարածութիւն կովկասում բնակեցուած է միապաղաղ հայ ազգաբնակութեամբ, ուր նրանք 70 80 տոկոս են կազմում։ Բայց չնայելով այդ հանգամանքին, Հ. Յ. Դաշնակցութիւնը, որը իր կողմը ունի կովկասեան հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը՝ տէրրիտորիական ինքնավարութեան փոխարէն պահանջում է ֆէդերատիվ ինքնավարութիւն, որպէսզի ոչ մի փոքրամասնութիւն ճնշման չենթարկուի։ Ֆէդերացիա կովկասեան ժողովուրդների մէջ՝ կանտօնային սիստէմով, Ֆէդերացիա Ռուսաստանի զանազան մասերի մէջ։ Ներկայումս վրացիները Գուբիայում եւ հայերը Ղարսի, Ալէքսանդրապոլի եւ մասամբ Երեւանի շրջանում, ուր չէզոքացրած են կառավարական բոլոր հիմնարկութիւնները՝ դատարան, ոստիկանութիւն եւն. համարեա թէ ինքնավար են, և այս արդէն ապացոյց է, որ ժողովուրդը հասուն է եւ ընդունակ ինքնիրեն կառավարելու ֆէդերատիվ սկզբունքով։

«Սվոբոժդենիէ»ի ծրագրի պաշտպանը շատ ճգնեց ցոյց տալ թէ իրենց ծրագրում նախատեսած են հրապատակ ազգերի իրաւունքները, թէ սկզբունական քայլերը աէջքի համար միեւնոյն են լինելու, ընդհանուր եւ գլխաւոր նպատակին՝ միապետութեան կործանման հասնելուց յետոյ, տրդէն ժողովուրդներին իրենց է մնում այնուհետեւ կարգադրել իրենց վիճակը եւ ծրագրի մէջ նոր յաւելումներ կամ փոփոխութիւններ անել — բայց համոզել անկարող եղաւ։

Վիճաբանութիւնը աւարտելուց յետոյ, դուրս եկան բոլոր այն տարրերը, որոնք չցանկացան միանալ այդ կազմակերպութեան, մեծին մի խումբ բուրժուա-ինտելիգենտներ որոնք եւ կազմեցին բիւրօ։

Այսպիսով մի առիթ եւս ներկայացաւ ցոյց տալու, որ ճնշուած ազգերը եւ մասնաւորապէս կովկասը իրենց անյետաձգելի եւ ուրոյն պայմաններն ու պահանջներն ունին, որ տեղական ինքնավարութիւնը նրանց օրէնսդրական իրաւունքով տնտեսական եւ կուլտուրական ազատ զարգացման պայմաններով — մի անյետաձգելի պահանջ է, որ Կովկասի ժողովուրդը այդ բանը լաւ գիտէ եւ մտադիր չէ դարձեալ միամիտ գտնուել եւ տուժել։ Եւ «Սվոբոժդենիէ»ի յարգելի ներկայացուցիչը հեռացաւ Թիֆլիսից լաւ գիտակցելով այդ։

«Դրօշակ»

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սիրելի՛ Խմբագրութեան!

Թէհրանի մեր կոմիտէից Ձեզ ուղարկուելիք այս գրութիւնը հասցնելով Ձեզ՝ հաստատում ենք որ «Մեղուկը» գծուած հաւիներով առաջնորդուող եւ զանազան դրդումներից թելադրուած մի մութ գրող է, որ աշխատում է, եւ յաջողուել է գաւակցարար, «Շարժումի միջոցաւ այդ օրինակ ստայող գրութիւններով մեզ վարկաբեկ։ դրա համար խնդրում ենք մեր կողմից էլ, մերժել այդ անձնաւորութեան այդպիսի գրութիւնները, եւ կարգադրել ենք որ նոյն տեղի մեր կոմիտէն մի այլ ուղղամիտ թրքակի վերայ մատնացոյց անի Ձեզ, որի գրութիւններին կարողանաք վստահութիւն ընծայել։

Ցոյս ունենալով մեր խնդրի այս մտքով կարգադրութեան.

Ընկերական բարեւներով

Ատրպատականի Կենտր. կոմիտէ

[redacted]

Թէհրանի Դ[illegible] ամիսնցաւ սրբ[illegible] յայտնում մեզ յարգելի խմբագրութեանդ, որ Շարժումի պատասխան է։ Ներում սիրայմամբ՝ խմբագրութիւնից այդ գործում մեծ հոգ ագիտութիւն է։ Երկրորդ ինձ կարծես ծաղրի համար ոչ մի խելացի տղա աչակերտ չեղաւ։ ընտրած բթամիտներ, հիւանդոտ, անարիւն ծոյլ եւ քնկոտ էին բոլորն էլ։ Կամ թէ կատարեալ մարմնացած սատանաներ։ Ոգրեմն յաճախ զզւանքով աշխատում էին եւ հրճվանքով վերջը դիմաւորում։ Երրորդ ես ձեզ գանգատեցի իմ դրժբախտ արտաքինս։ ուր որ էլ մտնէի ուսուցչութեան, մի շարաթի մէջ անում պատմութիւն էր լինում։ Ամուսին, տղան, եղբայր կամ տան բարեկամը սիրահարվում եւ հալվում էին։ իսկ տան սիկինը նախանձում է։ լալիս։ կատաղում։ Զզւում եմ եւ հեռանում բոլորովին։

Երեք ու կէս տարվան մէջ ես Ղազայ վարժուհի։ հաչապահի օգնական, տելեֆոնի պաշտօնեայ, դեբասանուհի, երկաթուղու վարչութեան մէջ հաչապահ, քարտուղարութիւն արի հոյակաւոր գրագիտի մօտ, վերջապէս գրավճառանոցի կառավարչուհի եղայ։

(Շարունակելի)

—

մակերպութեան, մեծին մի խումբ բուրժուա-ինտելիգենտներ որոնք եւ կազմեցին բիւրօ։

Այսպիսով մի առիթ եւս ներկայացաւ ցոյց տալու, որ ճնշուած ազգերը եւ մասնաւորապէս կովկասը իրենց անյետաձգելի եւ ուրոյն պայմաններն ու պահանջներն ունին, որ տեղական ինքնավարութիւնը նրանց օրէնսդրական իրաւունքով տնտեսական եւ կուլտուրական ազատ զարգացման պայմաններով — մի անյետաձգելի պահանջ է, որ Կովկասի ժողովուրդը այդ բանը լաւ գիտէ եւ մտադիր չէ դարձեալ միամիտ գտնուել եւ տուժել։ Եւ «Սվոբոժդենիէ»ի յարգելի ներկայացուցիչը հեռացաւ Թիֆլիսից լաւ գիտակցելով այդ։

«Դրօշակ»

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սիրելի՛ Խմբագրութեան!

Թէհրանի մեր կոմիտէից Ձեզ ուղարկուելիք այս գրութիւնը հասցնելով Ձեզ՝ հաստատում ենք որ «Մեղուկը» գծուած հաւիներով առաջնորդուող եւ զանազան դրդումներից թելադրուած մի մութ գրող է, որ աշխատում է, եւ յաջողուել է գաւակցարար, «Շարժումի միջոցաւ այդ օրինակ ստայող գրութիւններով մեզ վարկաբեկ։ դրա համար խնդրում ենք մեր կողմից էլ, մերժել այդ անձնաւորութեան այդպիսի գրութիւնները, եւ կարգադրել ենք որ նոյն տեղի մեր կոմիտէն մի այլ ուղղամիտ թրքակի վերայ մատնացոյց անի Ձեզ, որի գրութիւններին կարողանաք վստահութիւն ընծայել։

Ցոյս ունենալով մեր խնդրի այս մտքով կարգադրութեան.

Ընկերական բարեւներով

Ատրպատականի Կենտր. կոմիտէ

[redacted]

Թէհրանի Դ[illegible] ամիսնցաւ սրբ[illegible] յայտնում մեզ յարգելի խմբագրութեանդ, որ Շարժումի պատասխան է։ Ներում սիրայմամբ՝ խմբագրութիւնից

լով միասին արտասվում է, ու ասում։

—Ախ, Աննա դու կին ես. ես էլ կին եմ. կարող ենք իրար հասկանալ։ Ոչ մի յանցանք չեմ գտնում ձեր վրա, ոչ թոյլ կը տամ որ ձեզ մտրակեն եւ ոչ էլ Սիբիր աքսորեն։ Բայց որ դու մեղք ես գործել եւ պարտաւոր ես քաւել, դրա համար գնա, սեւ զգեստների մէջ, կուսանաց վանքում աղօթիր կամաւոր եւ անկամ մեղքերդ քաւելու համար։

Դժգոհ պալատականները կայսրուհուն չրջապատելով յայտարարում են

—Տիրուհի ձեր դատածը անկարելի է. եթէ այդ տեսակ հոգեսպանին չը մտրակել եւ Սիբիր չաքսորել, ոչ մի արդարութիւն չի լինի։ Այն ժամանակ կիները տղամարդկանց ինչ ձեւով ասես կը ոչնչացնեն...

Իսկ կայսրուհին պատասխանում է

—Դուք այր մարդիկ էք. այդ պատճառով էլ այդպէս էք դատում. իսկ մենք կիներս իրար կարող ենք հասկանալ. ու այստեղ մեղաւորը Աննուշկան չէ, այլ այն այրված անպիտանը, որ բռնանում էր. Իսկ Աննան բարի է. եթէ ինձ հետ այդ տեսակ մի բան պատահէր ես դեռ աւելի ուրիշ տեսակ վրէժ կը պարտաւորուէի...

Ահա սիրելիս գաղտնիքը մեզ ուրիշ հասցնում. մինչեւ հոգեսպանութիւն...

ԳԼ. Ը.

Բոլորը կատարվեց յաջողութեամբ. Ցենային Արինան տարաւ իսկ ես մենակ մնացի երկու ճամբաների մէջ տեղում. Նայում եմ եւ ընտրում։

—Ո՞ւր...

Պէտք է աշխատել սանձարձակութեան յիմարութիւններին վերջ պէտք է դնել. դրամ էլ չը կար. ապրելու միջոց չունեմ. պահանջներս սակաւ են եւ ծոյլ բայց դրանց համար էլ դրամ պէտք է։ Էհ մանկավարժութեան դիմեցի, թէեւ ոչ մի կոչում. երեխաներին ես չեմ սիրում։ Ամեն տեղ էլ սաներիս հետ ցուրտ քաղաքավարի յարաբերութիւնների մէջ էի. երբէք չէի պատժում, բայց երբէք էլ չէի փայփայում. ինձ հնազանդում, յարգում էին, բայց բաժանվում էին առանց յուզիչ տեսարանների, ինչպէս ծառ մարդուց։ Ծրծմայրները ատում էին ինձ։

—Այս ինչ վարժուհի է, միայն մը տածում է ինչպէս շուտով փող ստանայ, մազերը չտկէ, եւ սպայի հետ զբօսնու կառքով։ Դրանցից մէկը այդպէս էլ երեսիս ճառեց։

Ասեմ որ սպայի եւ մազերի յարդարման մասին ծծմայրը սուտ էր խօսում, այդ միջոցին ես կավալերներ ունենալու ոչ տրամադրութիւն ունէի, ոչ էլ կավալերներ ունէի։ Ընդհակառակը զարմանում էի թէ ուր անհետացան կոտրտուքս. սիրաբանութիւնների սիրտը։ Տարի ու կէս բոլորովին անսեռ կեանք անցրի. բայց ընդհանրապէս բարկացոտ ծրծմայրը իրաւունք ունէր։ Այն երեխաները որոնց ես պարտաւորված էի դաստիարակել իրբեւ. վարժուհի, բոլորովին ինձ պէտք չէին. ես նրանց վրա նայում էի իրբեւ խանութների դարակների վրա ուր պէտք է տեղաւորէի իմ զնած գիտութեան եւ շարժուձեւերի ապրանքը. տեղաւորել բարեխղճօրէն, դարակներին չը վնասել եւ ստանալ բարեխիղճ հաշիւ։

Բայց նախ բարեխիղճ հաշիւը այդ գործում մեծ հոգ ագիտութիւն է։ Երկրորդ ինձ կարծես ծաղրի համար ոչ մի խելացի տղա աչակերտ չեղաւ. ընտրած բթամիտներ, հիւանդոտ, անարիւն ծոյլ եւ քնկոտ էին բոլորն էլ։ Կամ թէ կատարեալ մարմնացած սատանաներ։ Ոգրեմն յաճախ զզւանքով աշխատում էին եւ հրճվանքով վերջը դիմաւորում։ Երրորդ ես ձեզ գանգատեցի. իմ դրժբախտ արտաքինս. ուր որ էլ մտնէի ուսուցչութեան, մի շարաթի մէջ անում պատմութիւն էր լինում։ Ամուսին, տղան, եղբայր կամ տան բարեկամը սիրահարվում եւ հալվում էին. իսկ տան սիկինը նախանձում է։ լալիս. կատաղում։ Զզւում եմ եւ հեռանում բոլորովին։

Երեք ու կէս տարվան մէջ ես Ղազայ վարժուհի. հաչապահի օգնական, տելեֆոնի պաշտօնեայ, դեբասանուհի, երկաթուղու վարչութեան մէջ հաչապահ, քարտուղարութիւն արի հոյակաւոր գրագիտի մօտ, վերջապէս գրավճառանոցի կառավարչուհի եղայ։

(Շարունակելի)

անկախ պատճառներով. երբեմն լրտեսում են այնպիսի յօդուածներ, որոնց միակ նպատակն է որ և է տեղի դաշնակցականների վարկը ձգել հասարակութեան առաջ. ինչպէս օր թերթիդ (1905 թ.), 698 համարում «Մերուկ» ստորագրութեամբ մի համրակի ստայոզ յօդուածն է։ Այս տարոյ ուսուցչական խումբն ոչ միայն դպրոցներն է բարձրացրել, այլ եւ նպաստել է տեղիս դաշնակցութեան զօրեղանալուն։ Մերուկը յարձակւել է վերոյիշեալ ուսուցչական խմբի վրայ՝ դրդուած լինելով միմիայն մեր ցած և քսու հակառակորդներից։ Այդպիսի ստոր հակառակորդ էր անցեալ տարի տեսուչ Պ. Լ. Բաբայեանի դէմ գրող յօդուածագիրը, որին նոյնպէս ժամանակին պատասխան ուղարկեցաք։ Մերուկին չենք պատասխանում որովհետեւ նա այդ պատուին արժանի չէ։

Իսրաէլ ցանկանալով մեր սիրած թերթի պատիւը բարձր պահել մեր չրչանում խնդրում ենք «Շարժում»ի էջերն ազատ պահէք այդպիսի ճշմարտութիւնից զուրկ, անպէտք յօդուածներից։ Տեղիս Դաշ. կոմիտէն խնդրում է խմբագրութիւնդ «Մերուկ»ին հրապարակաւ նախատինք կարդայ, որպէսզի մեզ անգամ այդպիսի ցած սրիկաներ չյանդգնին անպատիժ կերպով Դաշնակցական թերթի մէջ մի դաշնակցական խումբ անուանարկել, բոլորովին անայդար եւ անտեղի զրպարտութիւններ փաթաթելով նորա վրայ։ Պատիւ ունինք յայտնելու, որ Թէհրանում Դաշնակցութիւնն ունի պաշտօնական մարմին. ուստի մեր ընդհանուրիս սիրած գործը մի մաղաչափ անգամ չվնասելու համար յարգելի խմբագրութիւնդ Թէհրանի թղթակիցների մասին կարող է տեղիս Դաշ. կոմիտէից տեղեկութիւններ ստանալ և ապա վստահութեամբ տեղ տալ նոցա յօդուածներին։ Մեր կասկածները փարատելու համար խնդրում ենք, եթէ կարելի է «Մերուկ»ի ինկական ա[illegible] նունը հաղորդէք տեղիս կոմիտէին։

[redacted]

Կատարեալ յարգանօք՝
Թէհրանի Դաշ. կոմիտէ.

1905 թ. 12-ն ապրիլի.
ԹԷՀՐԱՆ

ՈՂԲԵՐԳՈՒ Կ. ԳԱԼՖԱՅԵԱՆ

Ֆիլիպէ՝ 5 յունիս 1905

Ինչպէս «Վէյէրնա Բօշթա»էն առնելով Շարժում հաղորդած էր այստեղ կը գտնուի նշանաւոր արդիստ Կարապետ Գալֆաեան։ Ինչպէս յայտնի է պրն. Գալֆաեան Բարիզի քնմին վրայ հռչակ ստացած գերասան է։ Ցարգելի արուեստագէտը ձգելով սակայն Բարիզը, ուր կրնար մեծ փառքի և հարստութեան հասնիլ շնորհիւ իր տաղանդի չգնաղ հայրենասիրութեամբ նուիրած է զինքը հայ բեմին։ Ան Բարիզէն Կովկաս երթալով թէ կեդրոնական և թէ գաւառական քաղաքներու մէջ երեք տարի շարունակ աշխատած է սիրողներու խումբեր պատրաստելով և «Համլէթ» ու «Օթէլլո» ներկայացնելով։ Կովկասի հայութեան կողմէ ան մեծ ընդունելութիւն գտած է։ Կովկասահայ և ռուսական թերթերը ժամանակին արձանագրեցին անոր փայլուն յաջողութիւնները։

Այժմ Գալֆաեան կը գտնուի Պուլկարիա։ Արդեօք պիտի գիտնայ մեր գաղութը օգտուիլ անոր ներկայութենէն, պիտի գիտնայ արդեօք ձգել լճացած կեանքը և հայ բեմին վրայ տեսնել ճշմարիտ գեղարուեստը, մայրենի լեզուով և հայ արդիստի մը կողմէ ներկայացուած։

Ուրախ ենք յայտնելու, որ վստահաղբիւրէ տեղեկացած ենք, թէ պրն. Գալֆաեան Փիլիպէի մէջ տեղական երգեց. թատերասէր խումբի անդամներէն կազմած է սիրողներու խումբ մը և կը պատրաստուի յառաջիկայ կիրակի «Էլիքսէնպուրկ»ի մէջ «Համլէթ»ը ներկայացնել։

Իր ներկայացումներուն համար ալ երգ. թատերասէր խումբը մենապէս պիտի օգտուի անգամ մը աշխատելով արդիստի մը առաջնորդութեամբ։ Երիտասարդները կաշխատին եռանդով։ Այս պարագան պատիւ կը բերէ իրենց և երգ. թատ. խումբին, մանաւանդ պատուաբեր է այն տիկին-ներուն և օրիորդներուն համար, որոնք առանց ուշք դարձնելու տիրող նախապաշարումներու վրայ սիրայօժար մասնակցած են խումբին։

Փիլիպէի հայ հասարակութեան կը մնայ իր ամբողջութեամբ ներկայ գտնուիլ թատրոնը և վայելել ճշմարիտ գեղարուեստը։

Ա. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պաշտօնական աղբիւրէ կիմացնեն որ 2 և 3րդ. զօրաբանակներու զօրաբաժինը կոտորուած է պատերազմական նախարարին հրամանով, առանց Երլտըզի հրամանի և նոյն իսկ հակառակ անոր տրամադրութեան։

— Թուրք շրջ. սպաներ որոց քով գտնուեր են Եէմէնի անցքերու մասին գրուածներ պարունակող եւրոպական թերթերա.քսորուած են կայսրութեան հեռու անկիւնները։

— Կառավարութիւնը Սերպիոյ պահանջներուն գոհացում տուեր է պաշտօնանկ ընելով Պիթօլիոյ ոստիկանապետը որուն հրամանով խուզարկութիւն կատարուած էր սերպ հիւպատոսարանի ատենադպրին տունը։

ՖՐԱՆՍԱ.

Յունիս 4 ի երեկոյեան նախարարապետ Ռուվիէ ընդունած է ձախակողմեան ծերակուտականներուն պատգամաւորները և յայտարարած է որ Մարոքի խնդիրը մեղմացած է, բանակցութիւնները կը շարունակուին բնական ընթացքով և գոհացուցիչ են. ուստի կայ որ շահախնդիր պետութիւնները գոհ պիտի մնան։

— Յունիս 5-ին Բարիզէն կը հեռագրեն որ Գերմանիոյ և Ֆրանսական կառավարութեան միջեւ առանց մեծ դժուարութիւններու համաձայնութիւն պիտի կայանայ Մարոքի խնդրի առթիւ։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ կառավարութիւնը Ճաբոնի հետ բանակցելու համար լիազօր ընտրած է Նէլիտովը, Պոլսոյ նախկին դեսպանը։

—Նախագահ Ռուզվէլթ կաշխատի որ Ճաբոնացոց ցամաքային զօրքերու գլխաւոր հրամանատար Օյամայի և ռուս գլխաւոր հրամանատար Լինեվիչի միջեւ ևս տեսակցութիւն մը տեղի ունենայ ժամանակաւոր հաշտութեան մասին, որը կրնայ դիւրացնել լիազօրներուն խորհրդակցութիւնը։

—Ցամաքային զօրքերը ընդհարում ունեցեր են և այս անգամ ալ ռուսները կորուստ տալով, պարտաւորուեր են իրենց դիրքերէն նահանջել։

—Ճաբոն ժողովուրդը և բարձրաստիճան մարդոց մեծ մասը ցանկութիւն կը յայտնեն որ պատերազմը շարունակուի։

—Լուր կը պրտտի որ իտալական կառավարութիւնը մտադրութիւն ունի միջազգային գոնֆէրանսի խնդիրը մէջտեղ դնել, որուն նպատակը պիտի ըլլայ Մ. Արեւելքի մէջ որոշել ամէն պետութեանց շահերը հաշտութենէ վերջը։ Կը կարծուի որ եթէ այդպիսի գոնֆէրանս մը տեղի ունենար Զինեւճաբոնական պատերազմէն վերջը, կարելի է որ այս պատերազմը տեղի չունենար։

ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

Վաղը, հինգշաբթի գիշեր ժամը 9 ու կէսին, առաջին անգամ ըլլալով, Վէսէլօ խմբին կողմէ պիտի ներկայացուի

«Հարսանիքին մէջ դատապարտութիւն»

տառմ—գօմէտի 4 արար։

Երգ և պարք

Եւ ծիծաղաշարժ զաւեշտ 1 արար։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ «Արեւելեան խնդրոյ» եւ ԱՌԱՋՆՈՐԴ Հայկական հարցի

—○—

676 էջերէ բաղկացեալ այս գործը Արեւելեան և Հայկական խնդրոց ամփոփ մէկ պատմութիւնը կուտայ։ Կը պարունակէ շատ մը՝ Հայերուս համար շահեկան պաշտօնաթղթեր, միջազգային դաշինքներու մէջ անցած հայոց նպաստաւոր յօդուածներ, եւ 1895 ին հայկական վեց գաւառներու համար եղած Բարեկարգութեանց Ծրագիրը։

Այս կարեւոր նիւթը դիւրահասկրնալի ոճով եւ պարզ կերպով Հայ հասարակութեան ներկայացնել եղած է հեղինակին ջանքը եւ նպատակը։

Գործը բաժնուած է 2 հատորներու, որոնք թէեւ թղթակազմ, բայց հաստատուն կարուած ըլլալով դիմացկուն են եւ կրկին կազմելու պէտք չունին։

Երկու հատորները կրնան զատ ալ ստացուիլ՝ իւրաքանչիւրը 1 ու կէս շիլինկ, երկուքն ի միասին կազմուած՝ 3 շիլինկ։

Փոստին ծախքը գնողին վրայ։

Կողքին երկու կողմը գրուած են Իզմիրլեան Ս. Պատրիարքին եւ հեղինակին պատկերները։

Դիմել ուղղակի հեղինակին։

ԲՐՕՖ. Կ. ԹՈՒՄԱՑԵԱՆ
Զիկուիլ Լօնտօն.

ՏՈՒՐՔԵՐՈՒ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ

Սօպրանիէի ԺԳ. նստին մէջ ընդունուած այս նոր կանոնագիրը մեծ մասամբ յեղաշրջած է նախորդ օրէնքները։ Մեր ազգայինները առհասարակ, մանաւանդ գիւղի խանութպաններն ու արհեստաւորները չեն գիտեր այդ օրէնքները ու միշտ ալ կը վնասուին, տուրք մը երկու անգամ կը վճարեն կամ աւելորդ տեղը տուգանք կուտան առանց պաշտօնեային ապօրինութեան դէմ բողոքելու։

Ուստի այդ կարգի ազգայիններու ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ հայերէնի թարգմանելով հրատարակեցինք այդ կարեւոր օրէնքները։ Մեր հրատարակած տետրակը գրպանը ունեցողը ոչ մէկ պաշտօնեայէ չի խաբուիր, կը գիտնայ թէ ե՞րբ կամ որո՞ւ պիտի վճարէ տուրքը, տուգանք պիտի տայ թէ ոչ եւ որչափ եւն։ Ոչինչ գումարի մը համար ագահութիւն չընողը տասնեակ ֆրանքներ պիտի չահի ապահովապէս եւ ուրիշներու ալ պատճառ պիտի ըլլայ որ չահին։

Կը հրաւիրենք մեր ազգայինները որ օգտուին առիթէն։

Լեզուն շատ պարզ է, եւ կարեւոր տեղերը Պուլկարերէնը կամ տաճկերէնն ալ տպուած է։

Գին 2։ սանդիմ փոստի ծախքով 25 Գրամի փոխարէն 5 սանդիմոց նամակադրոշմ ալ կընդունուի։

Դիմել Օնիկ Բարսեղեանի «Արեւելեան տպարան»։
Վառնա

Печатница на П. Глушковъ и С-ие, Варна